ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Միհրան Գալստեան, Յասմիկ Աբրահամեան, *Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի աշխատութիւններ (ՀԱԻԱ)* – 6, խմբ.՝ Արսէն Բոբոխեան (գլխ. խմբագիր), Տորք Դալալեան (գլխաւոր խմբագրի տեղակալ), Լեւոն Աբրահամեան, Պաւէլ Աւետիսեան, Միհրան Գալստեան եւն., «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2024, 268 էջ:

2023 Հոկտեմբերի 18-19ը ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտում (ՀՀԱԻ) ընկերաբանական գործընթացների եւ ինստիտուտների մարդաբանութեան բաժնի նախաձեռնութեամբ եւ ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագոյն կրթութեան եւ գիտութեան կոմիտէի ֆինանսաւորմամբ տեղի ունեցաւ «Համաշխարհայնացումը եւ սոցիալ-մշակութային գործընթացները Հայաստանում. հիմնախնդիրներ եւ հեռանկարներ» խորագրով գիտաժողովը: Գիտաժողովը նպատակ ունէր վերլուծելու յետխորհրդային Հայաստանում տեղի ունեցող ներային-տնտեսական եւ մշակութային մի շարք խնդիրներ, որոնք պայմանաւորուած են նաեւ համաշխարհայնացման գործընթացներով: Դրանք փոխում են հասարակութիւնների, տնտեսութիւնների, մշակոյթների եւ քաղաքական համակարգերի կառուցուածքը: Այդ գործընթացները յանգեցնում են նոր անդրազգային տնտեսական համակարգերի, աւանդական մշակոյթների, ինքնութեան եւ պատկանելութեան վերաիմաստաւորմանը, որոնց խոր եւ համակողմանի քննարկումը Հայաստանի յետագայ զարգացման համար ունի կարեւոր կիրառական նշանակութիւն:

Գիտաժողովի քսանվեց մասնակիցները գիտահետազօտական տարբեր կառոյցներից էին, որոնք ներկայացնում էին միջգիտակարգային տարբեր ուղղութիւններ. ՀՀԱԻ, Երեւանի պետական համալսարան, Հայոց ազգագրութեան եւ ազատագրական պայքարի պատմութեան ազգային թանգարան, Հայաստանի պատմութեան թանգարան, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազօտութիւնների կենտրոն, Արուեստի ինստիտուտ, ԱՄՆ Սիրակուզայի եւ Քլերմոնթի համալսարաններ: Գիտաժողովի նպատակն էր՝ գաղթի, Սփիւռքի եւ ընկերամշակութային մի շարք խնդիրների քննարկումը համաշխարհայնացման գործընթացների ենթաթեքստում:

Զեկոյցների մեթոդաբանական յենքը վերջին տարիներին կատարուած քանակական եւ որակական հետազօտութիւնների արդիւնքներն են, որոնք հեղինակներն իրականացրել են հարցաթերթային, բովանդակային, խօսոյթ, պատմահամեմատական, մեդիա եւ թուային հարթակների վեր-

լուծութիւնների միջոցներով: Կարեւորելով դրանց գիտական եւ կիրառական նշանակութիւնը՝ ՀԱԻԱ խմբագրական խորհուրդը նախաձեռնեց զեկուցումների հիմամբ գրուած յօդուածների հրապարակումը հերթական համարում: Յօդուածները խմբաւորուած են 6 թեմատիկ բաժիններում:

«Համաշխարհայնացում եւ միգրացիոն գործընթացներ» բաժնում քննարկւում են 2018ին Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխութիւնից յետոյ ընթացող գաղթի գործընթացները (ներգաղթ եւ արտագաղթ) եւ Սփիւռքի ու հայրենադարձութեան վերաբերեալ քաղաքականութեան մշակման հիմնախնդիրները: Այստեղ կարեւորւում է այն մօտեցումը, որ համաշխարհայնացման գործընթացները վերափոխել են գաղթի իմաստը, քանի որ գաղթողներն ամբողջովին չեն կտրւում իրենց հայրենիքից, այլ միաժամանակ մասնակցում են երկու կամ աւելի հասարակութիւնների ընկերային եւ մշակութային կեանքին:

Գիտաժողովի գաղափարի հեղինակ եւ շուրջ քառասուն տարի Հայաստանի գաղթի գործընթացների ընկերամշակութային խնդիրներն ուսումնասիրող Միհրան Գալստեանի «Մնա՞լ, թէ՞ գնալ. Հայաստանից հնարատր նոր արտագաղթի սոցիալ-մշակութային հիմնախնդիրների շուրջ» յօդուածում քննարկւում են արտագաղթ առաջացնող հրատապ խնդիրները: Հետազօտութեան հիմքում ընկած են 2021ին ՀՀ բոլոր մարզերի քաղաքային եւ գիւղական բնակավայրերում 639 տնային տնտեսութիւններում անցկացուած հարցումները, որոնց արդիւնքով տեղեկատուութիւն է հաւաքուել եւ վերլուծուել 1259 գաղթողի մասին: Բովանդակային վերլուծութեան են ենթարկուել 2021ին եւ 2023ին անցկացուած համապատասխանաբար 29 եւ 13 փորձագիտական հարցազրոյցները: Վերլուծելով 2023ի եւ դրանից յետոյ տեղի ունեցող արտագաղթի պատճառները, արտագաղթողների ընկերաժողովրդագրական կազմը, արտագաղթի համար նախընտրելի երկրները եւ դրանք ընտրելու պատճառները՝ հեղինակը եզրակացնում է, որ հաւանական արտագաղթի հիմնական պատճառ շարունակում են մնալ տնտեսականը, քաղաքականը, պատերազմի վտանգը, զարգացման հեռանկարների բացակայութիւնը, ընկերաբանական, բարոյահոգեբանական մթնոլորտը: Վեր հանելով գաղթի հիմնական ուղղութիւնները՝ Ռուսաստանի Դաշնութիւն, ապա՝ ԱՄՆ, Քանատա, այնուհետ՝ եւրոպական երկրներ, Գալստեանը գրում է, որ այդ երկրների ընտրութիւնը նախեւառաջ պայմանաւորուած է էթնիկ ցանցի (ազգական-բարեկամներ, ընկերներ) առկայութեամբ, որն ընդունող երկրում ընկերատնտեսական եւ հոգեբանական խնդիրները յաղթահարելու փուլում կարեւոր նախապայման է: Այս ենթախորքում հեղինակը կարեւորում է Հայաստանի ընկերատնտեսական զարգացման ոլորտում Սփիւռքի դերի վերանայումը, քանի որ Սփիւռքը գաղթի ցանցի միջոցով պարարտ հող է ստեղծում ծագման երկրից արտագաղթի համար, ինչը դեռեւս քիչ ուսումնասիրուած թեմա է:

Լուսինէ Տանաջեանի «Հայ եւ այլազգի ներգաղթեալների համարկումը Հայաստանում. համեմատական կողմեր» յօդուածում էլ քննարկուել են 2022 Փետրուարին սկսուած ռուս-ուքրանական պատերազմի հետեւանքով Հայաստան տեղափոխուածների համարկման հիմնահարցերը տընտեսական, ընկերային, մշակութային եւ քաղաքական ուղղութիւններով՝ հայ ներգաղթեալների եւ ռուս գաղթողների համեմատական համապատկերում: Ուսումնասիրութիւնը հիմնուած է տեսական գրականութեան եւ թեմային առնչուող գիտական նախագծի նախնական փուլի հետազօտութիւնների վրայ: Վերլուծութեան արդիւնքները հեղինակին թոյլ են տալիս եզրակացնել, որ համարկման տարբեր փուլերում ներգաղթեալներին հանդիպող խնդիրները բաշխւում է երկու ուղղութեամբ՝ *իրաւական,* որոնք առնչւում են ընդունող երկրի օրէնսդրական եւ իրաւական կարգաւորումների դաշտին, եւ *մշակութային,* որտեղ կարեւոր դեր ունեն ընդունող երկրի մշակութային միջավայրին հաղորդ լինելը, լեզուի խնդրի յաղթահարելիութիւնը, ինչպէս եւ տուեալ երկրում ունեցած ընկերային կապերը:

Թեմայի օրգանական շարունակութիւն կարելի է դիտարկել Սօնա Ներսիսեանի «Հայաստանը ռուսաստանցի ներգաղթեալների ընկալումներում» յօդուածը, որտեղ հեղինակը քննարկել է 2022 Փետրուարին սկըսուած ռուս-ուքրանական պատերազմի հետեւանքով ՌԴից ներգաղթած հայերի եւ ռուսաստանցիների՝ ՀՀն ընտրելու պատճառները՝ հետազօտութեան յենք ընդունելով ընկերամշակութային, իրաւական եւ տնտեսական ուղղութիւնները: Հեղինակը եզրակացրել է, որ ռուսաստանցի ներգաղթեալների մեծ մասը Հայաստանը դիտարկում է որպէս ժամանակաւոր կամ տարանցիկ երկիր: Ներկայացնում է նաեւ ռուսաստանցի ներգաղթեալների կողմից Հայաստանն ընտրելու եւ Հայաստանի մասին ունեցած ընկալումների ընդհանուր պատկերը:

Սփիւռքի եւ հայրենադարձութեանը վերաբերող խնդիրների համախումբ է քննարկում Սիւզաննա Բարսեղեանը «Հայաստանի հայրենադարձութեան քաղաքականութեան հիմնահարցերն արդի իրողութիւնների ենթախորքում» յօդուածում: Բարսեղեանն առաջնահերթութիւն է համարում գաղթի, Սփիւռքի եւ հայրենադարձութեան քաղաքականութիւնների միջեւ յստակութիւն մտցնելու անհրաժեշտութիւնը եւ հայրենադարձութեան ամբողջական շղթայի արդիւնաւէտ կազմակերպման համար պետական քաղաքականութեան ու ռազմավարութեան մշակման անհրաժեշտութիւնը: Հեղինակը վերջինիս վերաբերեալ առաջարկներ է ներկայացնում, որոնք են.- կարիքների գնահատում Հայաստանում եւ Սփիւռքում, Սփիւռքի համայնքների դասակարգում, հայրենադարձութեան համարկման ծրագրերի մշակում, մշակութային բազմազանութեան եւ ներառական միջավայրի ստեղծում, ինչպէս նաեւ օրէնսդրական, ֆինանսատնտեսական եւ մշակութային այլ բնոյթի առաջարկներ:

Բ.՝ **«Ներգաղթեալներ եւ տեղահանուածներ. Հայաստանի ընկերա-մշակութային լանդշաֆտը»** բաժնի երեք յօդուածներում քննարկւում են աշխարհի տարբեր վայրերում բռնկուած ռազմական գործողութիւնների հետեւանքով ծագման երկիրը լքած եւ ՀՀում ապաստանած հայերի եւ այլազգիների ընկերա-մշակութային յարմարման եւ մշակութային ժառանգութեան իրացման իրաւունքի խնդիրները:

Գայիանէ Յակոբեանը ««Հալէպի շուկան»՝ որպէս սուրիահայերի ձեռնարկատիրական գործունէութեան մանդրամոտէլ» յօդուածում քննարկում է 2011ից Սուրիայում ընթացող պատերազմի պատճառով Հայաստան ներգաղթած սուրիահայերի՝ աշխատաշուկայում յարմարման ընթացքը: Հետազօտութեան հիմնական խնդիրներն են սուրիահայերի գործունէութեան տեսակի վերաբանաձեւումը, Հայաստանի գործարար միջավայրի մշակութային եւ օրէնսդրական առանձնայատկութիւններին պատշաճեցումը, որոնք ներկայացւում են 2014ի եւ 2023ի տուեալների համեմատական վերլուծութեամբ: Որպէս օրինակ դիտարկելով Երեւանի «Հալէպի շուկան»՝ հեղինակի վերլուծութեան արդիւնքները ցոյց են տալիս հետեւեալը. *առաջին՝* «Հալէպի շուկայում» հիմնականում ներկայացուած են սուրիահայերի կողմից Հայաստանում ձեռնարկատիրական գործունէութեան հիմնական ոլորտները, *երկրորդ՝* սուրիահայերը յաղթահարել են ձեռնարկատիրական գործունէութիւն ծաւալելուն ուղղուած ինչպէս ՀՀ օրէնսդրական դաշտին առնչուող, այնպէս էլ ընկերա-մշակութային առանձնայատկութիւններով պայմանաւորուած հիմնական դժուարութիւնները:

Գարիկ Աթանէսեանի «Աւտենտիկութեան խօսոյթը եւ բեմադրուած ժառանգութիւնը յետխորհրդային Հայաստանի զբօսաշրջային պրակտիկաներում» յօդուածը նուիրուած է Հայաստանի ներգնայ զբօսաշրջութեան վերջին միքանի տասնամեակում դինամիկ զարգացող հարազատ զբօսաշրջութեանը: Հեղինակը քննարկում է այն խնդիրը, որ Հայաստանում հարազատ զբօսաշրջութեան ուղղութեան ձեւաւորման վրայ մեծ ազդեցութիւն ունեն 2022ին բռնկուած ռուս-ուքրանական պատերազմի հետեւանքով Հայաստան տեղափոխուածներն եւ բլոգէրները, որոնք չունեն «ակադեմիական, պաշտօնական, կրօնական կամ ծիսական իրաւասութիւն» (էջ 85): Աթանէսեանը ներկայացնում է նաեւ ՀՀ իրաւասու մարմինների կողմից հարազատ զբօսաշրջութեան կազմակերպման ուղղութիւնները: Եզրայանգում է, որ հարազատ զբօսաշրջութեան աճը պայմանաւորուած է զբօսաշրջիկների կողմից առկայ պահանջարկով, ինչն էլ յաճախ պատճառ է դառնում հարազատ զբօսաշրջութեան միջոցով «աւանդականի» եւ «ազգայինի» բեմականացման՝ այդ եզրոյթների բովանդակութեանը ոչ այնքան համապատասխան իրականութիւններ ներկայացնելով:

2020ի 44օրեայ պատերազմի հետեւանքով Արցախի Հանրապետութեան մի շարք բնակավայրերից, այդ թւում՝ Հադրութի շրջանի համանուն քաղաքից եւ 48 գիւղերից բռնի տեղահանուած հայերի մշակութային իրա-

տունքի իրացման խնդիրներն է քննարկում Արմինէ Տիգրանեանը «Ադրբեջանի կողմից բռնի տեղահանուած արցախահայերի մշակութային կեանքին մասնակցութեան սահմանափակումները (Արցախի Հադրութի շրջանի օրինակով)» յօդուածում: Հեղինակը, վկայակոչելով միջազգային իրաւունքը (Մարդու իրաւունքների համընդհանուր հռչակագիր, ՄԱԿի զեկոյցներ եւ ԵՈՒՆԵՍԿՕի կանոնակարգեր եւն.), հիմնաւորում է, որ բնօրրանից բռնի տեղահանուած լինելու հետեւանքով հադրութցիները զրկուած են նիւթական մշակութային ժառանգութեան (յուշարձաններ, գերեզմանոցներ եւն.) հետ հաղորդակցվելու իրաւունքից, իսկ ոչ-նիւթական մշակութային ժառանգութեան (բարբառ, տօներ եւն.) հետ հաղորդակցումը սահմանափակուած է՝ իր ձեւաւորման տարածքից հեռու գտնուելու եւ պահպանմանն ու վերարտադրմանը նպաստող միջավայրի եւ հնարաւորութիւնների սահմանափակութեան կամ բացակայութեան պատճառներով:

Ժողովածուի Գ.՝ **«Կրթութիւն եւ համաշխարհայնացում»** բաժնում ընդգրկուած յօդուածներում վերլուծւում են, թէ խորհրդային եւ յետխորհրդային ժամանակաշրջաններում արհեստավարժ մշակոյթի, մասնաւորաբար գրահրատարակչութեան, լեզուական քաղաքականութեան եւ կրթական համակարգի վրայ համաշխարհայնացման գործընթացներն ինչ ազդեցութիւն են ունենում պետական եւ հասարակական մակարդակներում:

Ռուբէն Օհանջանեանի «Արհեստավարժ մշակութային արժէքների փոփոխման որոշ հարցեր ՀՀում համաշխարհայնացման ենթախորքում» յօդուածը նուիրուած է խորհրդային եւ յետխորհրդային ժամանակաշրջանների թարգմանական գրականութեան խնդիրներին: Թարգմանական գրականութեան վիճակագրութիւնն ուսումնասիրելու համար հեղինակը դիտարկել է, թէ որ լեզուներից (բնագիր եւ միջնորդ լեզուներ) են թարգմանուել, որ երկրների հեղինակների գործերն են թարգմանուել՝ հիմք ընդունելով ՀՀ ազգային գրադարանի եւ Գրապալատի հրատարակած «Հայ թարգմանական գրականութիւն» մատենաշարը, ՀՀ առաջատար հրատա-ակչութիւնների թարգմանչական շարքերը, 1980, 2014-19 եւ 2023ին Լոռու, Տաւուշի, Կոտայքի եւ Սիւնիքի մարզերում անցկացուած դաշտային ազգագրական հետազօտութիւնները եւ այլ աղբիւրներ: Քննարկել է թարգմանական գրականութեան տարածման եւ սպառման գործընթացները: Ուսումնասիրութիւնը ցոյց է տուել հետեւյալը.- ա) եթէ խորհրդային տարիներին արտասահմանեան հեղինակների գործերը գերազանցապէս ռուսերէնից են թարգմանուել, ապա յետխորհրդային շրջանում, ռուսերէնից զատ, մեծ թիւ են կազմում բնագիր լեզուից արուած թարգմանութիւնները, բ) մեծացել է արտասահմանեան գրողների թարգմանութիւնների քանակը, որը համաշխարհայնացման ենթախորքում արեւմտեան արժէքների տարածման ցուցիչներից է:

ՀՀում լեզուական քաղաքականութեան խնդիրներն է ներկայացրել Լուսինէ Անգելուշը «Հայաստանի Հանրապետութեան լեզուական քաղա-

քականութիւնն արդի շրջանում» յօդուածում: Հեղինակն անդրադառնում է ՀՀում լեզուական քաղաքականութեան մշակման իրաւական հիմքերին (ՀՀ Սահմանադրութիւն, «Լեզուի մասին» ՀՀ օրէնքը եւն.), յետխորհրդային շրջանում Հայաստանում օրէնքով ամրագրուած հայերէնի՝ որպէս պետական լեզուի գերակայութեանը եւ այլ լեզուների ուսուցման կազմակերպման պետական ու միջպետական մօտեցումներին, որոնց ուսուցման անհրաժեշտութիւնը պայմանաւորում են քաղաքական, տնտեսական, կրթամշակութային կապերի ձեւաւորման անխուսափելիութիւնը եւ մարտահրաւէրները: Ամփոփելով փորձագիտական հարցազրոյցների եւ հրապարակումների տուեալների վերլուծութիւնները՝ Անգելուշը գրում է, որ լեզուական քաղաքականութիւնը եւ լեզուական օրէնսդրութիւնը շարունակական բարեփոխումների կարիք ունեն՝ գիտակրթական եւ հասարակական կեանքում ապահովելու հայերէնի առաջնայնութիւնը եւ օտար լեզուների հետ յարաբերակցութիւնը:

«Համաշխահայնացման խօսոյթը հայկական ՋԼՄներում. կրթութեան հիմնախնդրի համատեքստը» յօդուածի հեղինակ Մակիչ Վարդանեանը, հիմնուելով տեղական քսաներեք կայքերում 2003-24ի ընթացքում հրապարակուած երեսունհինգ յօդուածների վրայ, վերլուծել է, թէ տնտեսական, քաղաքական, մշակութային, ընտանեկան, ազգային արժէքների պահպանութեան տեսանկիւնից դրական եւ բացասական ինչ կողմերով է ներկայացուած համաշխարհայնացումը: Հեղինակը գրել է, որ ուսումնասիրութեան մէջ ընդգրկուած մեդիահարթակներում հանրակրթութեան եւ բուհական համակարգերում կատարուող փոփոխութիւնները (օրինակ՝ ՀՀ միացումը Բոլոնեան գործընթացին, դպրոցական որոշ դասագրքերում կատարուող փոփոխութիւնները եւն.) դրական տեսանկիւնից չեն ընկալւում, քանի որ մեկնաբանւում են կրթութեան համաշխարհայնացման ենթախորքում: Վարդանեանը, մամուլի մեկնաբանութիւններից զատ, մէջբերում է կրթութեան ոլորտի մասնագէտների մօտեցումը, ըստ որի՝ կրթական համակարգում կատարուող փոփոխութիւնները ոչ թէ «կրթութեան համաշխարհայնացում», այլ «կրթութեան միջազգայնացում» են:

Դ.՝ **«Աւանդականն ու արդիականը ընկերամշակութային փոխակերպումներում»** բաժնում քննարկւում են կենսապահովման մշակոյթին, ի մասնաւորի՝ հագուստին եւ ուտեստին առնչուող փոխակերպումները:

Սվետլանա Պողոսեանը ներկայացնում է Հայաստանում վաղ-խորհրդային, ուշխորհրդային եւ յետխորհրդային ժամանակափուլերում տեղի ունեցած ընկերատնտեսական եւ հայրենադարձութեան գործընթացների համապատկերում հագուստի համալիրի կրած փոփոխութիւնները: Դրանք դիտարկւում են գիւղ-քաղաք, կին-տղամարդ ցուցիչների համեմատական համապատկերում: Փոխակերպուող տարրերի շարքում են հագուստի ձեւը, գործուածքը, գոյնը, հագուստը լրացնող մանրամասները (գլխի յարդարանքներ, ժապաւէնազարդ, փողկապ եւն.), սանրուածքը, ա-

ռօրեայ, աշխատանքային եւ յատուկ առիթների համար նախատեսուած հագուստը եւ մեր օրերում վերջինիս համահարթեցումը: Պօղոսեանն անդրադառնում է նաեւ խորհրդային շրջանում Հայաստանում հագուստի արտադրութեան որոշ հարցերի:

Յասմիկ Աբրահամեանի եւ Ռոման Յովսէփեանի համահեղինակած «Ուտեստի էթնոմշակութային դերը գաղթի շրջապտոյտում (Նախնական հետազօտութիւն՝ ըստ Սիւնիքից գրառուած նիւթերի)» յօդուածն անդրադառնում է գաղթականի ծագման երկրի սննդատեսակների՝ ընդունող երկրում որպէս էթնիկ ինքնութեան ցուցիչ լինելու խնդրին: Հետազօտութիւնը հիմնուած է 2021-22 Սիւնիքի ութ խոշորացուած համայնքներից վեցի տասնհինգ բնակավայրերում անցկացուած խորացուած հարցազրոյցների վրայ: Կատարուել են նաեւ էթնոբուսաբանական հետազօտութիւններ, մասնաւորաբար՝ օգտագործուող բոյսերի նմուշառում եւ *հերբարիում*ների պատրաստում, բոյսերի նոյնականացում: Հետազօտութեան մէջ ներկայացուած է երեք ուղղութիւն. 1) ինչպէ՞ս են վայրի ուտելի բոյսերը եւ գիւղական արտադրութեան սննդամթերքը յայտնւում գաղթողի հանգր-ուանած երկրում, 2) վերջիններս օտար երկրում ինչպէ՞ս են ճանաչելի դառնում, 3) ո՞ր սննդատեսակներն են տարւում, ի՞նչ նպատակներով եւ ո՞ր երկրներ են տարւում, հաղորդակցային ի՞նչ ուղիներով են տարվում: Վերլուծութիւնը ցոյց է տուել, որ գաղթի ծիրում ուտեստը կատարում է՝ ա) *էթնոմշակութային գործառոյթ*՝ նպաստելով գաղթողի եւ ընտանիքի կապի պահպանմանը եւ օտար միջավայրում էթնիկ ինքնութեան դրսեւորմանը, բ) գաղթողի աւանդական ուտեստը եւս *«գաղթում է»* եւ նոր միջավայրում ճանաչելիութիւն ձեռք բերում:

Ե.՝ **«Սփիւռքեան հիմնախնդիրներ»** բաժնի յօդուածներում հայկական եւ այլէթնիկ սփիւռքների օրինակներով քննարկւում են վերջիններիս ինքնակազմակերպման, ներսփիւռքեան փոխյարաբերութիւնների եւ սփիւռք ունեցող պետութիւնների կողմից նրա «փափուկ ուժի» օգտագործման, ինչպէս նաեւ էթնիկ ինքնութեան պահպանութեանն ուղղուած քաղաքականութիւնների վերաբերեալ խնդիրներ:

Ռուբէն Կարապետեանը «Սփիւռքի համայնքային կառոյցներում հայերի ներգրաւուածութեան խնդիրը» յօդուածում քննարկում է Սփիւռքում էթնիկ ինքնութեան պահպանման հիմնական ինստիտուտներից մէկի՝ համայնքային կառոյցների ձեւաւորման ու գործունէութեան մասնակցային խնդիրներ: Վերլուծութիւնները հիմնուած են Պէյրութի, Թեհրանի, Պրահայի եւ Լոս-Անճելըսի հայութեան շրջանում շուրջ եօթանասուն գործիչների հետ անցկացուած խորացուած հարցազրոյցների եւ 1260 ձեւայնացուած հարցազրոյցների նիւթերի վրայ: Հետազօտութեան հիմքում ընկած են մի շարք ցուցիչներ եւ ընդգրկուն մեթոդակազմ: Ուսումնասիրութեան համար ընտրուել է երեք տիպի հայօճախ. 1) Ի. դարասկզբին ձեւաւորուած (Պէյրութ եւ Թեհրան), 2) խառը տիպի՝ տեղաբնակներից եւ

ժամանակակից գաղթողներից բաղկացած (Լոս Անճելըս), 3) վերջին տասնամեակների գաղթողներից եւ նրանց սերունդներից բաղկացած (Պրահա): Վերոնշեալ տիպերից իւրաքանչիւրի համար հեղինակն առանձնացրել է սփիւռքահայերի կողմից համայնքային կեանքին ներգրաւուածութեան մի շարք օրինաչափութիւններ:

Նարէ Գալստեանը «Հայրենիքի մասին պատկերացումները Լոս-Անճելըսի հայկական համայնքում» յօդուածում վեր է հանում կարեւոր հիմնախնդիր առ այն, որ Սփիւռքին նուիրուած ակադեմիական ուսումնասիրութիւններում եւ պետական քաղաքական կողմնորոշման մէջ ընդունուած «հայրենիք-պետութիւն» հասկացութիւնները Սփիւռքի հայերի իրական ընկալումները լիարժէքօրէն չեն արտայայտում: Հետազօտութիւնը հիմնուած է Լոս-Անճելըսում եւ ՀՀում 2020-21ին անցկացուած խորին եւ փորձագիտական հարցազրոյցների բովանդակային վերլուծութեան վրայ: Հայրենիքի ընկալումը պայմանաւորուած է մի շարք գործօններով՝ հին եւ նոր Սփիւռքների առկայութեամբ, անձերի կամ նրանց նախնիների ծննդավայրով, պատմական եւ իրական Հայաստանի մասին ընկալումներով եւն.: Հարցազրոյցի մասնակիցների պատասխանները հեղինակին թոյլ են տալիս եզրակացնելու, որ Հայաստանը՝ որպէս հայրենիք, միանշանակօրէն չի ընդունւում նրանց կողմից, ապա յաւելել, որ այս առումով վերանայման կարիք ունեն Սփիւռքը որպէս մէկ ամբողջական համակարգ դիտարկելու մօտեցումը եւ հայրենադարձութեան խնդիրները:

Նելլի Խաչատրեանի, Սալվինէ Մարկոսեանի եւ Մարիամ Յարութիւնեա-ի «Էթնոկրօնական վերափոխարկումը համաշխարհայնացման ենթախորքում (հնդկական, թուրքական եւ իռլանդական սփիւռքների փորձի հիման վրայ)» յօդուածի նպատակն է էթնոկրօնական վերափոխարկման, «այն է՝ սկզբնական (էթնո)կրօնական աւանդոյթին վերադառնալու» (էջ 218) մեխանիզմների ներկայացումը: Վեր են հանում տարբեր կրօնների (հինդուիզմ, իսլամ, քրիստոնէութեան կաթոլիկ ուղղութիւն) պատկանող վերոնշեալ ազգերի սփիւռքների կառավարման եւ սփիւռքների հետ գործակցութեան մօտեցումները: Թէեւ այդ ազգերի սփիւռքների առաջացման պատճառները տարբեր են, սակայն նրանցից իւրաքանչիւրի՝ սփիւռքի հետ աշխատելու ռազմավարութիւններում կան ընդհանուր մօտեցումներ: Երեքի դէպքում էլ այդ ուղղութեամբ կազմակերպուող աշխատանքները պետական քաղաքականութեան մաս են կազմում եւ միտուած են սփիւռքի ներուժը որպէս «փափուկ ուժ» կիրառելուն, իսկ սփիւռքների հետ աշխատանքները հիմնականում ընթանում են կրթական, մշակութային, կրօնական, ընկերային ուղղութիւններով:

Զ.՝ **«Հաղորդում»** բաժնում ընդգրկուած է Հռիփսիմէ Ասատրեանի «Մանկական բանահիւսութեան որոշ արդի դրսեւորումներ» հաղորդումը: Հեղինակը 2013, 2022 եւ 2023ին Երեւանի որոշ վարչական շրջաններում եւ Արարատի մարզի երկու բնակավայրերում գրանցուած նիւթերի հիման

վրայ ներկայացնում է մանկական խաղային մշակոյթում տեղի ունեցող այն փոփոխութիւնները, որոնք ներազդուած են քաղաքական գործընթացներից եւ երեխաների միջէթնիկ շփումներից: Մասնատրաբար, խաղային հաշուերգերում եւ դերաբաշխումներում հանդէս են գալիս մերօրեայ հայ, ռուս եւ այլազգի բարձրաստիճան քաղաքական դէմքեր: Ասատրեանը ներկայացրել է նաեւ անեկդոտներ եւ զուարճախօսութիւններ, որոնք, քաղաքականացուած երանգից զատ, վեր են հանում երեխաների ընկալումները ընկերամշակութային եւ հասարակական կեանքում տեղի ունեցող գործընթացների վերաբերեալ:

Ժողովածուն ամփոփում է Է. բաժնում տեղ գտած ***Հայկազեան հայագիտական հանդէսի*** 2022ի երկու համարների գրախօսութեամբ: Վերջինս արժեւորում է յօդուածներում ներկայացուած խնդիրները, հարցադրումները, վերլուծութիւնները, ուսումնասիրութիւնները, որոնց ժամանակագրութիւնն ընդգրկում է միջնադարից մինչեւ մեր օրերը: Ընդհանուր առմամբ, *Հայկազեան հայագիտական հանդէսի* 2022ի երկու հատորներն ունեն թեմատիկ միքանի ուղղուածութիւն, որոնք ներկայացուած են վաթսուն յօդուածներում (բնագաւառները՝ *«Պատմութիւն»*, Սփիւռք, ցեղասպանութիւն, Արցախեան պատերազմ եւ անվտանգութիւն, *«Տնտեսագիտութիւն»*, գիւղատնտեսութիւն, նաւթարդիւնաբերութիւն, *«Արուեստ եւ արհեստ»*, քաղաքաշինութիւն, կիրառական արուեստ, երաժշտութիւն, մանրանկարչութիւն, գորգագործութիւն, *«Ընկերաբանութիւն»*, համավարակ, լիբանահայերի խնդիրներ, Սփիւռք եւն., *«Եկեղեցի, կրօն եւ փիլիսոփայութիւն»*, փիլիսոփայութեան դրապաշտական ուղղութիւն), չորս քննարկումներում (քաղաքականութիւն, կրթութիւն, լեզուաբանութիւն), հինգ հրապարակումներում (պատմութիւն, ազգագրութիւն, գրականութիւն, գաղթականութեան պատմութիւն), չորս հաղորդումներում (կիրառական արուեստ, քարտեզագրութիւն, եկեղեցաշինութիւն):

Հոյգ հատորներում ընդգրկուած են նաեւ արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի վերաբերեալ հարցումներ, գրախօսականներ եւ մահագրականներ:

Ամփոփելով *Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի աշխատութիւններ* վեցերորդ պրակը (թուային տարբերակը տե՛ս՝ http://serials.flib.sci.am/Publications/ethnography2024/book/content.html), կարող ենք արձանագրել, որ ներառուած յօդուածներում քննարկւում են համաշխարհայնացման գործընթացների ազդեցութեամբ փոփոխուող ընկերամշակութային տարաբնոյթ խնդիրներ: Հայաստանեան իրականութիւնում համաշխարհայնացման գործընթացների ազդեցութիւնը բազմաշերտ է, որը տնտեսութեան, ընկերաբանական-ժողովրդագրական կառոյցում, մշակութային ինքնութեան ոլորտում եւ Սփիւռքում դառնում է փոփոխութիւնների հիմք:

Յօդուածների գիտագործնական արժէքն ամրապնդում է այն, որ դրանցում ձեւակերպուած խնդիրները, իրավիճակների սահմանումը կամ լուծումների առաջադրումը հիմնուած են համակողմանի հետազօտութիւնների վրայ: